**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ**
**ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ**
**ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ**
**ՌԻՉԸՐԴ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՈՐ Ի**
**ԿԱԼԻՖՈՐՆԻԱ, ԱՄՆ**

ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանից տեղեկացանք, որ յատուկ հանդիսութեամբ պիտի նշուի Ձեր ծննդեան 80-րդ տարեդարձը: Ուրախալի այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր շնորհաւորանքները, օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Մեծարգոյ պրն. Յովհաննիսեան, Ձեր կեանքը՝ ազգային, հասարակական, գիտական ու մանկավարժական տասնեակ տարիների բեղմնաւոր գործունէութեամբ ամբողջական նուիրում ու ծառայութիւն է մեր ժողովրդին: Միացեալ Նահանգներում հայագիտութեան զարգացման վաստակաշատ մշակներից էք Դուք՝ Ձեր երկարամեայ հետեւողական աշխատանքով եւ գիտական ժառանգութեան հարուստ վաստակով: Մեր ժողովրդի պատմութեանը նուիրուած Ձեր ուսումնասիրութիւնները լոյս են սփռում մեր անցեալի էջերին՝ նպաստելով, որ հայորդիները ճանաչեն մեր արմատները, մեր հայրենեաց աւանդները, հաղորդակցուեն մեր մեծերին ու նրանց կերտած արժէքներին: Հայորդուդ նախանձախնդիր աշխատանքի շնորհիւ Կալիֆորնիայի Համալսարանը, իր հարուստ գրադարանով, դարձել է հայագիտութեան կարեւոր կենտրոն, որտեղ հայ եւ օտարազգի ուսանողները, մանկավարժներն ու գիտնականները հնարաւորութիւն են ստանում ուսումնասիրել մեր ժողովրդի պատմութիւնը, մեր ոսկեդէնիկ լեզուն, մատենագրական մեր հարուստ ժառանգութիւնը, հայ մշակոյթը:

Գնահատարժան է Ձեր աւանդը նաեւ՝ Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը համաշխարհային գիտական, քաղաքական ու հասարակական շրջանակներին ներկայացնելու գործում: Հեղինակելով արժէքաւոր աշխատութիւններ ու գիտական յօդուածներ, հանդէս գալով բազմաթիւ դասախօսութիւններով Միացեալ Նահանգներում եւ նրա սահմաններից դուրս, Դուք տասնեակ տարիներ անընդհատ հետեւողութեամբ ծառայում էք մեր ժողովրդի արդար դատի յաղթանակին:

Հայրապետիս համար զոհունակութիւն է նաեւ անդրադառնալ, որ Դուք՝ որպէս ընտանիքի հայր, Ձեր հայրենասէր, ազգասէր ու եկեղեցասէր ոգին փոխանցել էք Ձեր զաւակներին ու թոռներին՝ անձնական օրինակով նրանց խրախուսելով ազգանուէր ծառայութեան:

Ի գնահատութիւն ազգօգուտ Ձեր բազմարդիւն վաստակի, սիրով ընդառաջելով Թեմական առաջնորդի խնդրանքին, Ձեր ծննդեան 80-ամեայ յոբելեանի առիթով շնորհում ենք Ձեզ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած՝ Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը հայցելով Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին:

Թող Բարին Աստուած Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 15-ն Փետրուարի
յամի Տեառն 2012 եւ ի թուին Հայոց ՌՆԿԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1298